

Բ. ՂԱՌԻՔՅԱՆ



891.995  
Ձ-47

ԵՂԻԿՆ  
ՈՒ  
ԾԻՏԻԿԸ

19 JUN 2013

10823

30 MAY 2011

891.990

2-477

ւժ.

ՌՈՒԲԵՆ ՂԱՐԻՔՅԱՆ

ԵՂԻԿՆ ՈՒ ԾԻՏԻԿՆ

Նկարները  
ԱՆ. ԳԱՍԳԱՐՅԱՆԻ



1295  
38

ԳԵՏՉՐԱՏ  
ՀԼԿՑԵՆ ԿՈՒ ԿԵՑ ԱՂԵԿԱԳԱՏԱՆԵԿԱՆՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ  
ՅԵՐԵՎԱՆ 1998



Գարունն յեկավ ճիկ, ճիկ, ճիկ.  
Առուն ուրախ գլգլաց,  
Յեկավ սիրուն մի ծիտիկ՝  
Նստեց ծառին ծլվլաց.

— Ճյուղի վրա բուն կանեմ  
Փափուկ ու նուրբ խոտերով,  
Գիշերն անուշ քուն կանեմ՝  
Իմ սիրունիկ ճուտերով:  
Ասաց՝ թռավ ու շրջեց,  
Ու խոտ բերեց, շինեց բուն,  
Մեջն ել յերեք ձու անձեց,  
Ճուտեր հանեց շատ սիրուն:

Ճուտերն ուրախ ու ազատ՝  
Մոր թեփի տակ հարազատ,  
Ապրում եյին, մեծանում՝  
Թե՛վ ու փետուր միշտ հանում:  
Յերբ մեղմ քամի յեր անում,  
Ծառի ճյուղը տատանում,  
Փափուկ, տաքուկ բնի մեջ՝  
Ընկնում եյին քնի մեջ:  
Գալիս եր մայր— ծիտիկը՝

Որվա պաշարով լիբր,  
Չագուկներին վեր հանում,  
Նրանց սիրով կերակրում:  
Ինքն ել նստում բնից վեր՝  
Յերգում որոր ու յերգեր,  
Մինչև նրանց քուն գնում՝  
Կրկին գործի յեր գնում:

Կյանքը լավ եր, բերքը՝ շատ,  
Ծիտն ել գվարթ ու ազատ  
Աշխատում եր յեռանդուն  
Ու առատ կեր բերում տուն:  
Ճուտերի հետ յերջանիկ,  
Կազմած ուրախ ընտանիք,  
Քեֆ եր անում իր բնում,  
Փարվում նրանց ու քնում:  
Բայց կյանքն այդպես չտեվեց,  
Փորձանք հասավ ծիտիկին.  
Ահա թե ինչ պատահեց  
Նրա յերկու ճուտիկին:  
Մայրիկ ծիտը տանը չեր,  
Յերբ մեծ քամի բարձրացավ,  
Բնից ընկան գույգ ձագեր  
Ու քիչ հետո մահացան:  
Գող փխտն ել ծառի տակ՝  
**Նրանց կերավ գեռ տաք-տաք:**  
Դունչը սրբեց գնաց տուն  
Ու իր համար յեղավ քուն:

2

Մեկ ձագի հետ իր բնում,  
Կիսամայի իր անում,  
Տրտում նստած ծիտիկը  
Կարատում եր սրտիկը:




Լաց եր լինում նա հոնգուր,  
Հետն ել յերգում եր ախուր.  
«Փոքրիկ, փոքրիկ ձագեր շան,  
Գտեք շուտով դուք ճամբան,  
Դարձեք յեկեր զեպի տուն,  
Վոր միասին լինենք քուն»:

Չուր եր կանչում ծիտիկը  
Ու կտրատում սրտիկը.  
Չագերն իրեն մոռացել,  
Կորել եյին, գնացել...

Բայց յեղել եր յեղածը,  
Չուր եր տխրելն ու լացը.  
Ծիտն ել վիշտը մոռացավ  
Աշխատանքի շուտ անցավ:  
Լավ եր պահում ծիտիկին,  
Իր մինուճար փոքրիկին.  
Ու գրուցի նստելիս՝  
Նրան խրատ եր տալիս,  
Վոր դուրս չգա բնից նա,  
Մինչև վոր լավ մեծանա:

3

Ծախ բնից քիչ հեռու՝  
Վազ եր տալիս մի առու.  
Այն առվի մոտ մի տուն կար,  
Այն տան մեջ՝ մի մանուկ չար.  
Նրա անունն եր Եզիկ,  
Մազը գանգուր, գեմքը վիք.  
Աղմկոզ ու կովարար,  
Ինչպես սուուն այն վարար:  
Չարածրճի Եզիկը  
Տեսել եր, վոր ծիտիկը  
Միշտ նստում ե այդ ծառի  
Բարձր ու կանաչ կատարին:  
Նա՛ այսոր ել նկատեց  
Ու ինքն իրեն մտածեց.  
«Պետք ե բռնեմ այդ ծառին,  
Ու թել կապեմ իր վտախն:  
Թող գա ապրի մեր բակում»



Իմ պատրաստած վանդակում,  
Նրան վորպես կերակուր  
Կտամ գաթա, քաղցրը շուր»:  
Հետո գգույշ նա գնաց,  
Լուսամուտում իրենց բաց՝  
Քցեց հատիկ մի քանի,  
Վոր ծիտիկին նա բռնի...

Արեփս յերավ նստեց սարին.  
 Մար ու դաշտեր կյանք առան,  
 Թռչունները աչքը բացին  
 Ու բներից դուրս թռան:  
 Ծիտիկ մայրն ել գնաց բանի,  
 Վոր ճուտիկին բերի կեր,  
 Ու եղիկենց պատուհանին՝  
 Տեսավ զեղին հատիկներ:  
 Շտապելով թռավ, ցատկեց  
 Լուսամուտից ընկավ տուն,  
 Իսկ եղիկը՝ փեղկը ծածկեց,  
 Ներսում լավեց թփրայուն...

Մինչ դողում եր ծիտիկը՝  
 Չար, անպիտան եղիկը  
 Նրան դրած վանդակում՝  
 Խրատում եր ու ասում.  
 — Այ դու հիմար, չար ծիտիկ,  
 Ամբողջ որը չիկ, չիկ, չիկ,  
 Ի՞նչ ես թեվիդ դու տալիս,  
 Չուր թռչկոտում, ման գալիս:  
 Մեր հափս ել ե մի թռչուն,  
 Բայց նա ինչո՞ւ չի թռչում.  
 Նա գիտե, վոր մարդու քով  
 Կյանքը լավ ե, ապահով:  
 Գարուն, ձմեռ, թե ամառ՝  
 Ազատ, ուրախ՝ իր համար  
 Քեֆ ե անում իր բնում,  
 Գիշերն անուշ քուն լինում:  
 Իսկ դու, գնուր տեղ բաց ողում՝  
 Թռչկոտում ես, թռչկոտում  
 Առավոտից-իրիկուն,

Ու քաղցած ես զնում տուն:  
 Ի՞նչ ոգուտ ե թռչելը,  
 Աննպատակ շրջելը,  
 Կամ թե դատարկ այդ ողում  
 Ի՞նչ ես ճարում և ուտում:  
 Ի՞նչի յե պետք դուրսը քեզ,  
 Քաղցից, ցրտից կսատկես,  
 Այստեղ ամեն բան ել կա,  
 Ապրիր ինձ մոտ մինչև մահ:  
 Յես քեզ կտամ շատ լավ կեր,  
 Դու կլինես ինձ ընկեր,  
 Կապրես սիրուն տնակում,  
 Կծլվաս մեր բակում:  
 — Ինչի՞ս ե պետք սիրուն տուն,  
 Կամ ուտելիք անհամար,  
 Լավ ե շրջեմ բաց ողում՝  
 Ազատ, ուրախ ինձ համար:  
 Այնտեղ միջատներ կան շատ,  
 Ոգն ել մաքուր ու ազատ,  
 Լինի ձմեռ, թե ամառ՝  
 Միևնույն ե ինձ համար,  
 Մովոր ծիտը չի մրսում  
 Թե իր բնում, թե դրսում:  
 Չեր հափս ել թե ունենար  
 Թեվեր ուժեղ ու հարմար,  
 Թեվին տալով կզնար,  
 Յերբեք գետին չեր մնա:  
 Քո սիրունիկ այս տունը՝  
 Չարժե խոտե իմ բունը.  
 Ինձ մոտ դրսի տանջանքը  
 Արժե հազար այս կյանքը:  
 Իմացիր, վոր թռչունը,  
 Նաև մարդն չու մրջյունը,



Աշխարհի վողջ գանձերում՝  
 Ազատությունն են սիրում:  
 Խերք՝ մանուկ, դու ինձ թող,  
 Յեկ, վանդակի դուռը բաց,  
 Յես չեմ սիրում կյանք՝ մաշույ  
 Այս տնակն ու փափուկ հաց:

Շատ աղերսեց ծիտիկը,  
 Բայց չսեց Եզիկը,  
 Մի յերգ սուլեց ու գնաց,  
 Ծիտն ել՝ վանդակում մնաց:  
 Մտածում եր ծիտիկը.  
 «Ձե՛ վոր փոքր ե ճուտիկը,  
 Չունի դեռ ուժ, չունի թև,  
 Կյանքը կարճ ե, որը սև:  
 Գուցե ընկնի բնից տակ,  
 Գող փխտոն գա ու տանի,  
 Կամ ուրուրը ավազակ՝  
 Պատառոտի և լափի»...  
 Մտածում եր ծիտիկը  
 Ու չեր ուտում կուտիկը:

5

Իրիկունն իջավ  
 Լուսթյուն բերեց,  
 Մարի կատարից  
 Լուսինն ել նորեց:  
 Մարդ թե կենդանի,  
 Իր աչքն ե փակում.  
 Տխուր ծիտիկն ել  
 Քնեց վանդակում...  
 Քնեց. քնի մեջ  
 Տեսավ մի նոր կյանք՝  
 Ճնճողուկների վեճ,  
 Յերգ ու զվարճանք:  
 Իր գլխի վերեվ  
 Գեղեցիկ արեվ,  
 Իսկ ներքևն անա  
 Գույն-գույն, անհամար  
 Ծաղիկ, թիթեռներ

Ու կանաչ լեռներ:  
Յե՛վ ինքն ել թողած  
Վանդակն ու տունը՝  
Թռչում եր սիրած  
Դեպի իր բունը:  
Հասնում ե, ընկնում  
Իր ճուտիկի մոտ,  
Ճշում ե՛ գարթնում...  
Ու մնում կարոտ:  
Աստղը լուսնի հետ  
Ջրույց ե անում,  
Գիշերն ել այնպես  
Ո՛ւշ ե լուսանում.  
Վերջապես յերկար  
Գիշերն ել անցավ,  
Շողերով պայծառ՝  
Որը լուսացավ:  
Չարթնեց ծիտիկը  
Ու միտք ե անում.  
Ո՞վ պետք ե ձագիս  
Պաշտպանի կյանքում՝  
Փորձանքից, չարից,  
Ո՞վ պետք ե նրան  
Անցկացնի ջրից  
Անձրևոտ գարնան...  
Իսկ թե մեծանա՛  
Ո՛ւր պետք ե գնա,  
Կյանքի ճամբեքին  
Անձանո՞թ ե նա:

Վորքան ուժ ուներ ծիտը՝ հավաքեց,  
Ու վերջին ճիշով ուժգին ծղրաց.  
Մոտիկից անցնող մի ճնճողուկ լսեց՝

Թռավ նրա մոտ, և ծիտիկն ասաց.  
— Լսիր, ճնճողուկ բարեկամ,  
Խոսքը տխուր ծիտիկի,  
Գուցե իզուր մահանամ  
Այս վանդակի հատակին:  
Վատ տղա յե Եգիկը,  
Ի՞նչ եր արել ծիտիկը,  
Վոր բռնեց ու բանտարկեց՝  
Ազատ կյանքից ինձ զրկեց:  
Այժմ ունեմ մի խնդիր,  
Իմ սիրելի բարեկամ,  
Յեթե դու այն կատարես՝  
Յես յերջանիկ ինձ կզգամ:  
Պոչը շարժեց ճնճողուկը  
Ու ճրվյաց—ճիկ, ճիկ, ճիկ,  
Հայանիր ինձ քո խնդիրը,  
Կկատարեմ, իմ քույրիկ:  
— Ա՛յ, են ծառը, տես, վոր կա,  
Վրեն ունի մի հին բուն,  
Այնտեղ մի վորը ճուտիկ կա—  
Փոքրիկ, անգոր մի թռչուն:  
Նրան նայիր ու կեր տուր,  
Մինչև դառնա նա ամուր.  
Հետդ ման տուր, թոցրու,  
Միջատ բռնի կերցրու,  
Վարժեցրու նոր կյանքին,  
Ա՛յ իմ քույրիկ թանկագին,—  
Ասաց ծիտիկը նրան,  
Վորդեկարոտ մոր նձան:  
Ու կծկվեց իր տեղում.  
Լաց եր լինում, գողգողում:  
Իսկ ճնճողուկը սիրտ տվեց  
Տխուր ծտին, և թեթե՛վ


Թևին տվեց ու թեվեց,  
Անցավ ծառերի հետև:  
Մեկ էլ հեռվում յերեվաց՝  
Կացին ինչ վոր բան առած,  
Գնում եր նա այն բունը,  
Դեպի փոքրիկ թռչունը:

6

Եղիկն յեկավ շաքարաջուր,  
Գաթա բերեց ծիտիկին,  
Բայց ծիտիկը շատ եր տխուր,  
Զմոտեցավ այդ կերին:

— Այ իմ ծիտիկ, ազատ խոսիր,  
Տեսնեմ ինչ կա քո մաքում,  
Վոր վողջ որը տխուր, տրտում  
Վոչ ուտում ես, վոչ յերգում,—  
Ասաց եղիկն ու լուռ նստեց  
Վանդակի մոտ, տխրալի,  
Միրաբ հուզվեց, հանկարծ լացեց  
Մանկան նման նա բարի...  
Մահայն ծիտիկն ինչ ասեր,  
Մահվան դուռն եր նա հասեր,  
Թուլացել եր, նիհարել,  
Փոքրիկ ձվի շափ դասեր...

Միտք եր անում եղիկը՝  
«Գուցե սատկի ծիտիկը»:  
Միտք եր անում ու ասում.  
«Ի՞նչ հիմար բան եմ արել,  
Ո՞վ է տեսել ոգտակար  
Թռչուններին շարձարել:  
Իսկ թե մեկն էլ ինձ այսպես  
Բռներ տանջեր, ինչպես յես



Տանջեցի այս ծիտիկին,  
 Կամ թե տաներ բանտարկեր...  
 Միթե դա լավ կլիներ:  
 Ներիք, ներիք, իմ ծիտիկ,  
 Թուր գնահ, ճիկ, ճիկ, ճիկ.  
 Ազատ, ուրախ ման արի,  
 Խաղա, յերգի ու պարի...  
 Միայն հաջորդ գարնանը,  
 Յերբ վոր լինես մեր տանը,  
 Դու կտեսնես, թե ինչպես  
 Հյուր կընդունեմ սիրով քեզ»:  
 Յե՛վ Եղիկը ժպտազին՝  
 Դուռ բացեց վանդակի,  
 Ծիտը արագ տուն թռավ,  
 Իր ճուտիկին գիրկն առավ:


Ուրախացավ Եղիկը  
 Ու ծափ տվեց ջան, ջան, ջան,  
 Թռավ գնաց ծիտիկը,  
 Վատ մտքերն ել վերջացան:

7

Գարունն յեկավ ճիկ, ճիկ, ճիկ,  
 Առուն ուրախ գլգլաց,  
 Յեկավ փոքրիկ մի ծիտիկ՝  
 Նստեց ծառին ծլվլաց.  
 — Ծառի բարձրը կատարին,  
 Այսպես ամուր ու կարգին,  
 Ո՞վ ե շինել այս բունը,  
 Թռչունների այս տունը:  
 Այստեղ ապրող ծիտիկին  
 Վոչ չար բազեն կտանի,  
 Վոչ ել քամին ահազին  
 Այս նոր բունը կը ցրի:

Եղիկն եր այն տախտակով  
 Շինել հարմար ու սիրուն,  
 Յե՛վ ճակատին տառերով  
 Մե՛ծ-մե՛ծ գրել՝ ԹՌՉՆԱՏՈՒՆ:  
 Անցյալ տարվա չար գործից  
 Ու փորձերից լի ու լի  
 Հասկացավ, վոր թռչուններին  
 Չարչարել չի կարելի...  
 Չը լինեյին թռչունները՝  
 Վորդն ու մորեխն ու մոծակ  
 Կը կտրեյին մեր արտերը,  
 Կանեյին դաշտն ավերակ:  
 Յե՛վ այնուհետ թե դպրոցում,  
 Թե՛ փողոցում՝ շատ անգամ  
 Կանչում եյին մեր Եղիկին՝  
 «ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄ»:

36  
 1582  
 1285  
 38



023

Տեխ. խմբագիր՝ Ան. Փապարյան  
Սրբագրիչ՝ Վ. Ավագյան



Նրան արթնացրին ճնճղուկները



Գրավիճակի լրագրեր՝ Կ—4668. Հրատ. 4334.  
Պատկեր 21. Տրրած 3000.  
Թուղթ 62x92 Տպ. 11¼ մամ.  
Մեկ մամուլ 23000 նիշ. Հեղինակային 08 մամ.  
Հանձնված է արտադրության 2 հունվարի 1938  
Ստորագրված է ապագրության 10 փետրվարի 1938  
Գինը 80 կոպ.

Պետերատի 1 տպարան, Յերեվան. Լենինի փող. 65.

ՀՀ Ազգային գրադարան



NL0401101

10823

Գրք 80 Կ.



Ր ԿԱՐԻԲՅԱՆ  
ԵԴԻԿ և ՍՏԻՇԿԱ  
ԳԻՅ. ԱՐՄ. ՍՏՐ. ԵՐԵՎԱՆ